— Մի՛ տխրիր, Ֆարհատ, — ասաց նա ինձ. — դու մի լաւ եւ բարի առաջնորդ ունես, որ կը կանգնեցնէ քեզ ուղիղ ճանապարհի վրա...

Համարեաչ նոյն խօսքերը ասաց ինձ Կարօն, երբ վերջին անգամ բաժանուեցայ նրանից: Ի՞նչ էին նշանակում այդ խօսքերը:

Ես եւ Ասլանը դուրս եկանք սենեակից՝ նրան ճանապարհ դնելու: Մինչեւ սանդուղքները գնացինք նրա հետ: Այստեղ նա կանգնեցրեց մեզ, կրկին եւ կրկին անգամ սեղմելով մեր ձեռքը, ցած իջաւ սանդուղքներից: Ներքեւից մի անգամ եւս ետ նայեց, գլխով մնաք բարեաւ ասաց եւ դուրս եկաւ պանդոկից: Մենք երկար անշարժ կանգնած էինք սանդուղքների գլխին, եւ մեր աչքերը յառած էին դէպի այն դուռը, որտեղից դուրս եկաւ ազնիւ երիտասարդը եւ անյայտացաւ փողոցի մթութեան մէջ:

Վերադառնալով մեր սենեակը, թէ՛ ես եւ թէ՛ Ասլանը, սիրելի բարեկամից անջատելու ծանր տպաւորութեան ներքոյ, տխուր էինք, ոչինչ չէինք գտնում խօսելու: Ասլանը յոգնածի նման ընկողմանեցաւ օթոցի վրայ, իսկ ես նստեցի մոմի հանդէպ: Երեւում էր, որ ամբողջ օրը թափառել էր նա: Նրա աչքերը շուտով խփոեցան, սկսեց նիրհել: Ես նայում էի մոմի վրայ: Լուսաւորութեան զոհերը այժմ շատացել էին, եւ ճրագի շուրջը ծածկոած էր լուսոյ այդ անձնանոէր սիրահարների դիակներով...

Երբեմն իմ աչքերը յածում էին սենեակի շուրջը: Կարծես, որոնում էին Ջալլադի հետքերը: Նրա զէնքերը մնացել էին իրանց տեղում: Չլինի՞ թէ մոռացել էր նա: Կամ նրան այլեւս պէտք չէին այդ մահոան եւ կենաց գործիքները: Նա վերառեց իր փոքրիկ խուրջինը միայն, որի մէջ, որպէս սրբութիւն, պահոած էին այն մագաղաթները, որ նա գտաւ Աղթամարայ վանքում:

Պանդոկի բակից երբեմն լսելի էր լինում նրա նժոյգի խուլ խրխինջը: Խե՜ղճ անասուն, նա էլ տխուր էր երեւի, նա էլ զգում էր, որ իր սիրելի տէրը այլեւս չի նստի նրա վրայ:

Ասլանը բաց արեց աչքերը, ասաց.

— Եթէ մի մարդ հարցնելու լինի ինձ, շուտով զարթեցրու:

— Դու քնո՞ւմ ես:

— Ոչ, այնպէս նիրհում եմ:

Պանդոկում ամէն ինչ լուռ էր. ճրագները հանգցրել էին, եւ ամէն ոք հանգստանում էր խորին քնի մէջ: Միայն երբեմն լսելի էր լինում գիշերապահ հասասների ձայնը, որ ման էին գալիս պանդոկի կտուրի վրայ, եւ նրանց ձայնին պատասխանում էին միւս պանդոկների կտուրներից: